

ՍԻՐՈՅ ԶԱՇ

Լ. ԶԱՐԵԶԻՆ

Մայրավանքի հի՛ն, մարմա՛ր սեղաններէն, այս գիւեւր,
 Նոր արբեցում մը սրտում լեցուեւ աչկեսւ է մինչեւ:
 Նահապետ Տան պատկերով՝ ալեւոր պէտն ալ բազմեւ
 Զուկըներովն իր մասդաւ, պապերուն շունչն իր վերեւ...:

Ի՛նչ արբեցում՝ դարձող ետ, գիւեւներէն այն հեռու,
 Ուր մօտ՝ սրտերն էին մեր քիչ մ'աւելի իրարու,
 Ու տա՛հ՝ գինին սեղանին՝ բո՛ւխտ մեր մասաղ արիւնին,
 Եւ հացը մեր՝ պապերի՛ն՝ խաղաղութի՛ւն, օրհնութի՛ւն...:

Տակաւ թելերը ամէն հոգիներուն մեր նրկուն,
 Կը զգան անցնիլը հովին՝ քա՛ղցըր, նըման անցեալէն
 Յառնող ներսի ձայներու, յո՛րդ՝ ինչպէս կեանք մը բեղուն,

Հողին, ջուրին, լեռներուն, մեր նախնեաց փառքն երգելէն...:
 Ես արեղայ, ու սրտում, կ'ուզեմ նորէն արբենալ
 Այն հոգիով որ իմն էր, եւ զոր հիմա չունիմ ա՛լ...:

Ես արեղայ, ու բեկուն, կ'ուզեմ նորէն արբենալ...:

11 Մարտ 1945

ՇԷՆ-ՄԱՀ

